

ԱԷԵՏԱՔԵՐ




«ՓՈՂ ՏԱՌԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1892

ԹԻԻ 8



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ


ՏՂԱՅՈՑ ՎՐԱՅ

Պատկերներու այս շարքը կը ներկայացունէ պատմութիւն մը, բայց հաս մեկնիչի մը պէտքը կայ՝ վերի կողմի պատկերին մէջ գնախաղկը խաղան։ Դժուարին է Անգլիացի և Ամերիկացի պատանեաց հասկնալ թէ ինչո՞ւ բոլոր երկիրներու պատանիք իրենց չափ եռանդով չեն պարապիր այս և ասորնման զուարճութեանց։ Նոյն պատկերին մէջ մեզ մտազանուող երեք տղայք աննպաստ քննադատութիւն կ'ընեն այն երիտասարդին վրայ որ կ'արձակէ գնախաղկը, և որ, թէպէտ ճարտարութեամբ կը խաղայ, սակայն կերպով մը անհասկնալի դաժ է իրենց։ Յաջորդ օրը կէս օրէն մինչև երեկոյ անող պարապուրդին կ'երթան անսնել քարանձաւ (հաշտ) մը որոյ բերանը ծովեզեր կողմն է։ Ժամանակը շատ արագ կ'անցնի, և իրենք չեն խորհիր թէ ծովուն մակընթացութիւնը անզի կ'ունենայ, ինչպէս միշտ, քսան և չորս ժամն երկու անդամ երբ կը հասկնան բանը՝ կը անանեն որ ճամբան, ուրկէ կընային փախչիլ, գոցուած է վան գի շարք մտած է քարանձաւին բերնէն ներս, և ալքներն ա՛յնպէս զօրաւոր են որ զիրենք ետ կը վանեն եթէ յանդգնին դուրս ելլելու ջանալ։ Այլ ևս չունին տարակոյս իրենց խեղ-

դուեւրն, վասն զի շուրջ շուտով պիտի լցունէր քարանձաւը, եթէ ժամանակին օգնութիւն չհասնէր իրենց: Օգնութիւն կ'աղաղակեն. կը լսէ փոքրիկ տղայ մը որ կը վազէ պատմել այն երիտասարդին զոր արհամարհած էին իրենք: Երիտասարդն անմիջապէս կը վազէ ծովեզրը, հոն կը գտնէ կապուած նաւակ մը, նաւակատան մը դուռը կը կտորէ կը բանայ, կ'առնու թիեր, և յետոյ իւր բոլոր կարողութեամբ թի քայելով կ'ազատէ տղայքը ժամանակը շատ չանցած: Հարկաւ երիտասարդին վրայ այդ պատանեաց կազմած գաղափարը բոլորովին փոխուեցաւ:

րութեան համար: վասն որոյ կիրոս չինել տուաւ նամակատուններ, և կարգեց պատգամաւորներ ամէն գաւառաց մէջ: Գտաւ թէ լաւ ձի մը փորձ ձիավարի մը ներքեւ ս'ըջափ տեղ կարող էր ճամբորդել մէկ տուր մէջ առանց վնասուելու, և ըստ այնմ չինել տուաւ արտուներ իրարմէ հաւասար հեռաւորութեամբ: Խրաքանչիւր այս տեղերը նաև գրաւ պաշտօնեաներ որոյ պարտականութիւնն էր նամակներն ընդունիլ սուրհանդակներէն երբ կը հասնէին, և յանձնել զանոնք ուրիշ սուրհանդակներու, նաև տալ ասոնց նոր ձիեր միսներուն տեղը որք իրենց բաժինը կատարած էին ճամբուն վրայ:

ներքին կողմանց և Սթոքհոլմի հետ: Քաղաքին ցածադոյն մասը շատ կը նմանի Հոլանտական քաղաքի մը, վասն զի զայն կը կտրեն ոչ սակաւ ջրանցներ որոյ վրայ ձգուած են երկաթ կամուրջք: Կոթէնպուրկ շինուեցաւ 1619ին, Կոթմալուս Ստոլթոս թագաւորէն, որոյ մի ընտիր արձանը կանգնուած է քաղաքին վաճառանցին մէջ: Նափոլէնեան պատերազմաց ժամանակ ստացաւ առևտրական մեծ զարգացում, վասն զի շատ ուրիշ ծովեզրեայ քաղաքաց պաշարման պատճառաւ գլխաւոր կեդրոնն եղաւ վաճառականութեան Անգղիոյ և Եւրոպայի հիւսիսակողման հետ: Այնուհետև սկսաւ իյնալ, մինչև որ 1832ին ջրանցը և աւելի վերջերը՝ երկաթուղիները բացուեցան, որք հաղորդակցութեան մէջ կը գտնեն զայն ուրիշ տեղերու հետ:



ԿՈՒԵՆՊՈՒՐԿ

Կոթէնպուրկ անունով կը կոչուի ըմպելեաց առևտուրը կառավարող գրութիւն մը: Քաղաքական իշխանութիւնք արտօնութիւն կու տան միայն այսքան թուով խանութներու՝ անխարդախ հեղանիութներ և ըմպելիներ վաճառելու համար: Ասոնք են ընկերութեան մը ձեռքը որ գործածուած դրամագլխին շահուն առհարիւր Յը ինք կ'առնու և մնացած շահը կը յանձնէ քաղաքին գանձուն, և այս կերպով սուրբերը կը թեթեւան:

Ասկէ կ'ելլէ սա բարոյական խրատը Մի աճապարեր կազմել աննպաստ դաշակարներ:

ԹՂԹԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Հո՛ւրե՛ս ե՛նի փէ՛ւ և հանդէսը կ'ըսէ թէ ո՛ւր և ե՛րբ հնարուեցաւ թղթատարութիւնը:

Թղթատարութեան հնարիչը կը համարուի Պարսից կիրոս թագաւորը որ ապրեցաւ Քրիստոսէ իբր 600 տարի առաջ: Կիրոս պետութեան մէջ զըստնուող իւր բոլոր կուսակալներէն կը պահանջէր զրկել իրեն ճիշդ տեղեկագրութիւններ ամէն բաներու վրայ որ կը պատահէին իրենց այլ և այլ գաւառաց և բանակաց մէջ: Պարսից պետութիւնն ունէր յոյժ ընդարձակ տարածութիւն, և հարկ էր միջոցներ պատրաստել ստոյգ և արագ թղթատարութեան համար:

Այսպէս թղթատարը կը ճամբորդէին շարունակ գիշեր և ցերեկ, փոյթ չընելով ո՛չ անձրևը և ո՛չ ձիւնը, ո՛չ տաքը և ո՛չ ցուրտը. և կիրոս կ'ընդունէր շուտով լուրեր ամէն դէպքի վրայ, և կը զրկէր ինչ հրաման և հրահանգ որ հարկ կը համարէր: Գարեհ, հին Պարսից վերջին թագաւորը, թղթատարութեանց վերատեսուչն էր դեռ թագաւոր չեղած:

ԿՈՒԵՆՊՈՒՐԿ

Ասկէ առաջ դրած ենք Շուետի մայրաքաղաքին, Սթոքհոլմի, պատկերը: Շուետական քաղաքաց մէջ կարևորութեան կողմանէ երկրորդն է Կոթէնպուրկ, գլխաւոր նաւահանգիստը, աւելի քան 90,000 բնակչօք: Կոթագետոյ բերանն է այս քաղաքը, և շրանցով մը կապակցեալ է Շուետի

ՄԱՆՈՒԿ ԳԻՒՑԱԶՆ ՄԸ
Այս քաղաքին մէջ կը պուսկի դուցազն տղայ մը, կը գրէ Բանասացի թղթակից մը Սթոքհոլմի ինքուրեք լրագրին, տղայ մը՝ որ գրեթէ իւր կեանքը տուաւ ուրիշ կեանքի մը ազատման համար անցեալ փետրուար ամսուն մեր նահանգին մէջ պատահած սաստիկ փոթորկի և ցուրտի ժամանակ: Յիշեալ տղան, Ֆրանք Քարփէնթըր, և իւր փոքրիկ եղբայրը, Ռուպերթ, դուրս ելած էին նապաստակ որսալու համար այդ փոթորկին սկսած օրը, և տնէն շատ հեռի դաշտագետնին մէջ կը գտնուէին առանց ունենալու փոթորկին դէմ պատրաստուելու միջոց: Ֆրանք տասնևհինգ տարեկան էր և իւր եղբայրը՝ եօթը: Երբ փոթորկին եկաւ, Ռուպերթ սկսաւ լալ ցուրտին համար. Ֆրանք

առաւ զնա և վաղելով կը տանէր դէպ ի տուն, յուսալով տաք պահել զայն այս կերպով մինչև որ տուն մը հասնէին: Փոթորիկն այնպէս սաստիկ էր որ անոնք չուտով կորուսին իրենց քաջութիւնը, և ուրիշ բան չէին կրնար ընել բայց եթէ այս և այն կողմ թափառել առանց գիտնալու թէ ուր պէտք էր երթալ: Ռոպէրթ հետզհետէ աւելի կը մտէր, և Ֆրանք ի վերջոյ հասկեցաւ որ իւր եղբայրը պիտի սառնէր եթէ չընէր բան մը զնա ազատելու համար: Հանեց իւր հանդերձները մինչև այնչափ որ գրեթէ մերկ եղաւ, և զայնս հագցուց Ռոպէրթի: Այս կերպով յաջողեցաւ բաւական տաքութիւն պահել անոր մէջ, բայց այս պատճառաւ ինքն եղաւ ենթակայ սառելու վտանգին, և իրօք սառեցան իւր ոտու ընները և ձեռու ընները և մատները: Եւ ոչ միայն այլ բան այլ իւր անպատասպար մարմնոյն վրայ ազդող սաստիկ ցուրտը զինք շատ մօտ բերած էր մահուան: Ինքզինք ողջ պահելու համար թողոց իւր եղբայրը ուր կը գըտնուէին, և սկսաւ վաղել դաշտին վրայ: Եւ ջանալով գտնել ճամբան որ կը յուսար թէ մօտ էր իրենց: Երբ ի վերջոյ հասաւ ճամբուն, տեսաւ որ մօտ կը գտնուէր տան մը, մտաւ ներս իւր հետ մարդ մը առնելու և իւր եղբոր քով երթալու համար: Չկեցաւ կրակին քով, այլ գնաց մարդուն խօսելու և մինչև որ Ռոպէրթի վիճակը չապահովեցան չինկաւ տախտակամածին վրայ: Ֆրանք հոս բերուեցաւ դարմանուելու համար և այժմ աղէկնարու վրայ է, բայց բժիշկները կ'ըսեն թէ պիտի կորուսանէ իւր մէկ ոտը և երեք մատերը: Քաջառողջ կազմուածք ունենալուն շնորհիւ կարող եղաւ տակաւ սաստիկ ցուրտին առանց մնալու գէշ ազդեցութիւն մը իւր ընդհանուր առողջութեան վրայ:

ԱՐԸՆ ԿՂՁԻՈՑ ԲՆԱԿԻՉ ՄԸ

Տղայոց Աւետարեւրի Մայիսի Թուոյն մէջ դրինք պատկեր մը Կոնստանտնուպոլսի կողմէն զոր կը գործածեն իւրանտայի կարուէյ Գոյի կղզեցիք: Հոս մեր առջև կը տեսնենք այդ կղզեաց բնիկներէն միոյն պատկերը: Նայեցէք, անոր արեւմտեան (աւել) կարծես չինուած են ֆիւրախտանի մէջ: Երբ վտանայ և Պաշտպալայի մէջտեղ ձիւնապատ լեռներու վրայ քայլելով հինցան մեր կողմիցները և կը ցաւոունէին մեր գարշապարները, բարեկամ գիւղացիէ մը գնեցինք զոյգ մը արեւս տանց նման, և կը փափաքէինք որ զայնս հագած ընէինք մեր ճանապարհորդութիւնը:

Տղայոց Աւետարեւրի Մայիսի Թուոյն մէջ դրինք պատկեր մը Կոնստանտնուպոլսի կողմէն զոր կը գործածեն իւրանտայի կարուէյ Գոյի կղզեցիք: Հոս մեր առջև կը տեսնենք այդ կղզեաց բնիկներէն միոյն պատկերը: Նայեցէք, անոր արեւմտեան (աւել) կարծես չինուած են ֆիւրախտանի մէջ: Երբ վտանայ և Պաշտպալայի մէջտեղ ձիւնապատ լեռներու վրայ քայլելով հինցան մեր կողմիցները և կը ցաւոունէին մեր գարշապարները, բարեկամ գիւղացիէ մը գնեցինք զոյգ մը արեւս տանց նման, և կը փափաքէինք որ զայնս հագած ընէինք մեր ճանապարհորդութիւնը:



ԱՐԸՆ ԿՂՁԻՈՑ ԲՆԱԿԻՉ ՄԸ

Թիւնք ըլլան, այնպէս պիտի երեւի թէ պատկերին մէջ տեսնուած մարդը պիտի խօսի Հայերէն կամ ֆրոնտերէն: Մենք շատ մը բարեսիրտ և ազնիւ մարդոց հանդիպած ենք արեւի և շուրջ հազարոցներուն մէջ, և պարտիք խոստովանել թէ կը կարծենք որ բաւական երկար ժամանակ պիտի անցնի մինչև որ ընդհանրապէս Եւրոպական զգեստները:

ԸՆՏԱՆԵՑԱՄ ՓԻՂ ՄԸ

Սէլան կղզոյն վրայ նոր հրատարակուած գիրքի մը մէջ հեղինակը, Օրիորդ Ս. Ֆ. կորտոն, կը պատմէ շատ

սիրուն և մտացի ընտանեցած փղի մը վրայ: Յիշեալ փղը բռնուած էր երբ շատ փոքր էր. կը կոչուէր Քուրուէկալա ճէք: Սովոր էր երթալ հիւանդանոց իւր տիրոջ հետ որ էր բժշկական սպայ և սորվեցուցած էր փղին օգտակար լինել ամէն բանի մէջ, և մինչև անգամ դեղահատներ տալ հիւանդաց: Անգամ մը Մայայեցի զինուոր մը ձեռքէն ձգեց իւր դեղահատը, ասոր վրայ ճէք անմիջապէս վերցուց դեղահատը և ձգեց հիւանդին բաց բերանը միանգամայն փչելով այնպէս որ ապահով իջաւ կոկորդէն վար:

Իւր տիրոջ հետ որսի երթալ սորված էր, կը ծառայէր իբրև պատնէշ, և զարնուած որսը տիրոջը կը բերէր որսոյ շան պէս: Կարող էր որսը նշմարել հեռուանց և եակէն ինչալ առանց յայտնի ընելու, իւր տէրը կը ծածկէր իւր ետեւը որսին վրայ կրակ ընելու ժամանակ, և երբ հրացանը պարպուէր, կը վազէր կ'երթար ցնծութեամբ և կը դառնար ետ իւր պատիճին մէջ կրելով սիրամարգ մը կամ ուրիշ թռչուն մը:

ՀՐԱՄԱՆ

Ուելլինկոնի դուքսը շատ խիստ էր հրամաններու պահպանութեան մասին: «Երկաթեայ Դուքսը» ինչպէս կը կոչուէր երբեմն, երբեք այժմ չէր խօսեր թեթեւագոյն անհնազանդութեան մը անգամ, բայց զիտէր վարձատրել հրամանաց ճիշդ հնազանդութիւնը ճանաչելու անոր արժեքը: Լորտ Տէրպի հացկերոյթ մը կուտար Դքսին իւր գիւղացիին բնակարանաց միոյն մէջ այնպիսի ժամանակ մը երբ նորոգութիւններ և կահաւորումներ կ'ըլլային հոն: Եւ նախ պատերէն ոմանք

պիտի զարգարուէին նկարներով, և կեդրոնական սրահին սալապատակը պիտի նորոգուէր գոյնգոյն: Որպէս զի սալապատակը զերծ ըլլար փաստուէր, Լորտ Տէրպի մուճակներ գնել տուած էր գրան մօտը, և պատուիրած էր երիտասարդի մը, որ պատերէն մէկուն վրայ կ'աշխատէր, հրամայել որ և իցէ եկող անձի մը՝ որ հազնի մուճակներուն մէջ զոյգը և այնպէս անցնի անկէ: «Ով որ մտիկ չընէ քեզ» յաւելցուցած էր, «դուրս պիտի ընես զնա»:

Շուտ յետոյ խումբ մը անձինք ետ դարձան որսորդութենէ, և Ուելլինկոն

Թրն եկաւ իւր թաց և սոցմուս կոչիկներով, բացաւ դուռը և մտաւ սրահը: Երկտասարդն անմիջապէս վար ցտա, կեց սանդղակէն որոյ վրայ կեցած կր նկարէր, և բռնելով Ուէլլինկիթընի ուսերէն դուրս հրեց զայն անէն: Կէս օրէն ետքը Լորա Տէրպի իւր սենեակը կոչեց բոլոր անեղինները և դործաւորները, և ինք նստած մեծ պատերազմիկին քով ըստ թէ կ'ուզէր գիտնալ թէ ո՞վ էր որ յանդգնեցաւ դռնէն դուրս հրել Ուէլլինկիթընի դուքսը:

Նկարիչը, բոլորովին դողահար, յառաջ քալեց և ըստ, «Էս էի, տէր իմ»: «Ինչո՞ւրեմ,» ըստ Լորաը, «Ինչո՞ւ այդ բանն ըրիր?» Մարգը յայնժամ կրկնեց այդ առաստա իրեն տրուած հրամանը և ըստ, «Կարծեցի թէ ես հրամանի մը հնազանդեցայ, տէր իմ»:

Ասոր վրայ Ուէլլինկիթըն դարձաւ Լորա Տէրպիի և ժպտուն երեսով սակի մը հանեց գրպանէն և առաւ գործաւորին, բտելով, «Շատ աղէկ ըրիր որ հնազանդեցար հրամանին»:

ԲԱՆՏԱՐԿՈՒՄ ԱՐԾԻՒՐ

Մարդ մը ունէր արծիւ մը: Բըռնած էր զայն ողջ և անմտաւ երբ ձագ էր. պահած, կերակրած և մեծցուցած էր զայն և բնասանեցուցած էր որքան որ հնար էր: Վանդակին մէջ կը պահէր զայն: Բայց մարդը պիտի երթար աշխարհի միւս կողմը, ուստի խորհեցաւ թէ որո՞ւ տարու էր իւր արծիւը: Պէտք մը չէր տեսներ իւր հետ տանիլ զայն: Ըստ ինքնիրեն, «Էս մէկուն պիտի չտամ զայն, այլ ազատ պիտի արձակեմ»: Բայցաւ վաճառակն ուր կը պահէր արծիւը, առաւ թռչուելը և զբաւ իւր տանն ետև գտնուող պարտեզը, բայց զարմանքով տեսաւ որ նա չէր թռչեր:

Արծիւր կը պարտէր, սովորականէն քիչ մը աւելի խորը աւելով իւր քայլերը, բայց չէր թռչեր: Ի վերջոյ առաւ զայն և իւր ձեռքով դուռ պարտիզին պատին վրայ: արծիւը վար կը նայէր. մարդն սխառ քիչ մը ցտաի և տիրիլ և կ'ուզէր որ կարող լինէր խօսիլ արծիւին և ըսել ինչ որ բանաստեղծն ըսած է անոր վրայ, թէ նա է նշանակազատութեան և նոյն իսկ արևուն աչքին մէջ սուտաներաւ կարողութեան: Բայց յանկարծ անց մը, որ կը զբաւնէր օդին մէջ, անցաւ, ճառագայթիկ ստեղծ պայծառ ըլլաւ մը, և արծիւը նայեցաւ վեր: Արդեօք կը յիշէր իւր փառքի կտեան օրերը: Բայց ինչ զինք, վերցուց իւր թևերէն մին և տարածեց, յետոյ վերցուց միւսը. այնուհետև ճիւղ մը արձակելով թռաւ զնայ և շուտով երեցաւ յակ կէտի մը շտղ հեռի՝ կապոյտ երկնից մէջ: Այս է ինչ որ հաւատարմ կ'ընէ Աստուծոյ հետ հաղորդակցող հոգւոյն: Անոր բուր չղթաները կը խորտակին: Բանտին դուռը կը բացուի, և բանտարկերայ կապերը կը քակուին: «Տէրոջը ապա, ինչպէս երուն ոյժը պիտի նորոգուի. և

անոնք արծիւներու պէս թևերով վեր պիտի ելլեն»:

ԿԱՐՃ ԿԵԱՆՔԻ ՄԸ ՊԱՏՄԱՌԹԻՒՆ

Կանայ օրդ կը կր բնակէր խաղողի տերևներուն խիտ հովանոյն մէջերը: Չէր գիտեր թէ ի՞նչպէս հոն կը զբաւնուէր ինք. և երբէր չէր հարցնէր թէ ի՞նչ պիտի ըլլար: Իւր գիտուն վերէն էր կապոյտ երկնիքը, արեգակին շուռա, իրոնքը կ'անցնէին լայն տերևներուն միջոցէն, և իրեն ուտեառ ունէր փափուկ ճիւղեր և նուրբ բնձիղներ: Երբ երկնքը միմնար և անձրէն իջնէր, կը սողոսկէր և կ'ազատասներ որթատունկին (սաճ) ամենէն խիտ տերևներուն մէջ և կը սպասէր մինչև որ անցնէր անձրերը: Արդ մը ի՞նչ կ'ուզէր աւելի քան զայս:

Այսպէս ամառը սահեցաւ անցաւ, և օրդը կատարեալապէս մեծցուց: Իրաւոր շատ հետաքրքրական բան էր այն. թերևս ամենք գեղեցիկ համարէին զայն: Իւր երեք, չորս մասնաշաղկ երկայն մարմինը փափուկ կանաչութիւն մը ունէր, իւր կուշտերը սաթի գունով և կապոյտ գունով մարիկ գունաւոր կային կարգ կարգ. իւր զլխուն վրայ կը կրէր տեսակ մը պոսակ սաթի գունով և սեւ էլ սակայն իւր բոլոր պայծառ գոյներով և զարդերով հանդերձ մարդոց շատերուն շատ անհաճոյ էր: Կրնար սողալ, կրնար քիչ մը մազ լել այն ժամանակէն հետէ որ կը գտնուէր խաղողին տերևներուն վրայ: Բայց այդ էր իւր կարողութեանց սահմանը: Նա էր լոկ օրդ մը:

Երբ հասաւ Սեպտեմբեր ամիսը, փոփոխութիւն մը տեղի ունեցաւ այս ծանրաշարժ և դանդաղ տարածին վրայ: Մեծք երբեք պիտի չտեսնանք թէ նա ի՞նչ նպատակ ունէր իւր առջև, միայն սա կրնանք ըսել թէ կը հնազանդէր բնագոյն ինչ և ըլլար այն: Իւր մարմնոյն արտաքին կողմի հիւսեց գեղեցիկ պատմաճան մը, ծածկեց ինքնը անոր մէջ: Այս է ամէնը զոր գիտնէք:

Խաղողները քաղուեցան: Աշնան հովերը թօթափեցին տերևները որքայժամ էին թարչամեալ և չոր: Արթն և իւր ճիւղերը մերկացան և կ'երևէին իրենց թուխ գոյնով: Մնաց միայն փառած տերև մը իւր մէջ հիւսուած ունենալով մետաքսեայ խողակը որ մասամբ ծածկուած էր: Այսպէս կ'անցնէին ձմեռուան օրերը ձիւնով, արեգական ճառագայթներով, ցուրտով, անձրևով և ձիւնախառն անձրևով, և բոլոր այս բաներուն մէջ այդ պատառաստուն տերևը հաստաւ փակած էր խողակին և որթին ճիւղին — մեռած բան մը կը փակէր ըստ երևուածին նոյնքան անկեղծաբար բաներու:

Եկաւ գարունը. խողակը կը կենար արևատ սենեկի մը պատու հանի մը մէջ, կիրակի առաստա մը հոն կը տեսնուէր ինչպէս որ էր. կէս օրին դասարկ կեղևի փոխաւած էր: Պատու հանի շրջաւակին վրայ կը կախուէր թիթեռնիկ

մը ձևով և գունով գեղեցիկ: Անոր լայն թևերը կարմիր մօտ կապոյտ էին գորշ պիտակիներով, իւրաքանչիւր կողման վրայ մութ կարմիր պիտակով մը: Նոյն կարմիր թեամբ մտ շտակային ժապաւեններ կը շրջապատէին անոր մարմինը. իսկ գլխուն վրայ կը զբաւնէին փետրածն երկու գեղեցիկ բողկուկներ (պոչուկներ): Թևերն էին գեռ թաց, խորշամեալ և տկար: Կամայ կամայ կը բարձրանային և յետոյ կ'իջնային, ամէն անգաման քիչ մը աւելի բարձր. բարձրացունելու համար եղած իւրաքանչիւր աշխատութեամբ թևերն աւելի կը շտակուէին, իրենց խորշուն թիւր կ'անցնէր մինչև որ լիովին բացուեցան ասորածուեցան, և եղան զորաւոր, ազատ և գեղեցիկ: Արթնատունկին մէջ գտնուող այն օրդը, այն ծանրաշարժ, դանդաղ և սողալողալալալալալ, փոխաւեցաւ օդային կենդանւոյ, նոր ձիւրքերով, նոր ճաշակներով, նոր կարողութիւններով. եղաւ թևաւոր չքնաղ կենդանի մը:

Անկէ քիչ մը հետին, փողոցին վարի կողմը, մութ սենեկի մը մէջ, կը քանաւար փառքիկ մանուկ մը, ձեռու բններն և երեսը այնքան ճերմակ որքան սնտուկը որոյ մէջ կը պառկէր: Անկէ միայն քանի մը օր առաջ այս փառքիկը ունէր այնքան կատարեալ կեանք, առողջութիւն և յոյս, որքան թռչունը որ այդ կիրակի առաստակէր էր ծիրանածաղիկին (խշու՜) վրայ:

Ո՞ր էր այդ կեանքը: Ի՞նչպէս կարելի էր այդ սիրուն մարմինը գնել ի հող: Տան մէջ գտնուող միւս անձինք ի՞նչպէս կրնային ըլլալ առանց անոր որ էր սան ըլլար: Ասոնք են վշտացեալ ծնողաց համար խրթին հարցումներ որոց գեղարեւ պատասխանել և աղաչք կը զարմանային այդ ասորինակ և խորհրդաւոր փոփոխութեան վրայ որում ենթակայ եղաւ իրենց քոյրը:

Մեզի համար միշտ խորհուրդ և գաղտնիք պիտի մնայ այդ բանը որչափ ենք որ հարկները: Բայց թէ պէտք երբ չենք հասկնար զայն, Աստուած կը սորվեցունէ մեզ բազում գեղեցիկ ճամբաներով, յուսոյ և վատահալ թեան դասը երբ հոգին մէջ կը գնենք մեր սիրեկեաց մարմինները: Եթէ այն սողալող և զգոցող և զգուելի օրդը կը փոխուի իւր երկարատե քնայն մէջ, կ'առնու նոր կերպարանք և կ'ըլլայ թևաւոր և փայլուն կենդանի, ինչ չենք կրնար ակնկալել մարդկային հոգիէն որ ստեղծուած է նոյն իսկ Աստուծոյ պատկերին պէս, երբ յարութիւն առնու յարութեան առաստաւ անոր նմանութեամբ:

Ամերկայի Միտի... կան կողմէն, ԿԻՒՆ
Տնօրէն... ՊԱՐՆԸՄ
Ֆինանսըր... իր ան
ԿՈՍՏԱՆԲՆՈՒԳՈՒԽՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊԱ ՊՕՍՏԵԿՆ